Արքեպիսկոպոս, համայն Անգլիայի եպիսկոպոսապետ և միտրոպոլիտ, Նորին Գերաշնորհություն Ջորջ Կարեյի:

Վերջում ներկաներին իր շնորհակալության և օրհնության խոսքն ասաց Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Հոգեճաշն ավարտվում է համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս, Նորին Սրբություն Իլիա Բ-ի աղոթքով՝ ի նշան Հայ Եկեղեցու և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի անխորտակելի սիրո ու միության Ընդհանրական Եկեղեցու հանդեպ:

ՅՈԹՆՕՐԵՔԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Սեպտեմբերի 3-ին, ժամը 12.00-ին, Մայր Աթոռի միաբանները, հոգևոր ճեմարանի ուսանողները, հանդիսադրությամբ Կաթողիկոսական Տեղապահ Նորին Ամենապատվություն Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանի, Վեհարանից թափորով առաջնորդվում են դեպի Վեհափառ Հայրապետի հողադամբարան՝ յոթնօրեքի հոգեհանգստյան պաշտոն կատարելու: Ըստ կարգաց հայրերի սաղմոսների, հոգեթով շարականների երգեցողությամբ և աղոթքների ընթերցմամբ: Եկեղեցու սպասավորներն ու հավատացյալ ժողովուրդը խնդրանք և աղերս հղեցին առ Ամենաբարձրյալը, որպեսզի Տերը հավիտենական հանգստով խաղաղեցնի և սփոփի Ազգիս Հովվապետի ալեկոծյալ և ալեբախված հոգին՝ դասելով նրան և շարս սրբոց հայրապետաց, վարդապետաց և քահանայից:

Հավարտ հոգեհանգստյան պաշտոնի, դամբանական քարոզով հանդես եկավ Տ. Թորգոմ Արքեպիսկոպոս Մանուկյանը.

«Հավատացյալ ժողովուրդ,

Յոթնօրեքի այս հոգեհանգստյան պաշտամունքը կատարեցինք մեր սիրելի Հայրապետի հողադամբանին առջև: Նա այս տունին բնակիչն էր և հայրն էր: Նրա հոգին իր հավիտենական կայքը վերադարձավ, և ամեն անգամ, որ կքայլենք Մայրավանքի այս շրջափակին մեջ, անպայման պիտի հիշենք իրեն ներկայությունը ամեն տոնական օրերին, իրեն՝ թափորով Սբ. տաճար մտնելը, պատարագին ներկա լինելը, իր խոսելը և քարոզելը, իր հայրենասիրությունն ու շունչը: Իսկ մարմինը հանգչել է այստեղ: Այդ մարմինը տառապեց վերջին տարիներին, սակայն այն հոգին, որ իրենն էր, այդ մարմնի տառապանքեն երբեք չընկճեց: Եվ սա մեզի համար դաս է, որ երբեք թույլ չտանք մեր ֆիզիկական տկարությունները, հիվանդությունները, նեղությունները մեր հոգին ընկճեն: Եվ նրա այդ տառապագործ մարմինը այստեղ է: Նորից ամեն անգամ, որ անցնենք այս կողմերից, պիտի մեր աչքերը իրեն դառնան, զինքը պետք է հիշենք և ասենք. «Ասված հոգիդ լուսավորի, Վեհափառ Հայրապետ»:

Վաղը, պատարագից հետո, պիտի գանք այստեղ և հոգեհանգստյան պաշտոն կատարենք, որից հետո քառասունքին նորից պատարագ և հոգեհանգստյան կարգը պիտի կատարվի:

Ամեն մեր աղոթքներու մեջ հիշենք այն հոգին, որ մեր Հայրը եղավ, հիշենք այն հոգին, որ մեր Հայրապետը եղավ, աշխարհով ցրված մեր հայության մի տեսակ գլուխը, ներկայացուցիչը, ներշնչումը եղավ 40 տարի-

ներ: Այդ հոգին թանկագին էր, և այդ հոգին թանկագին լինելով՝ մենք նրա արժեքը պիտի երբեք չմոռանանք, և նորից ամեն անգամ, որ հիշենք, ասենք. «Աստված, ընդունիր նրա հոգին, դասիր նրան մեր սուրբ Հայրապետների դասը. որպեսզի այնտեղից մեզ օրհնի բոլոր մեր Եկեղեցվո սրբերի և հայրապետների հետ, և մենք այստեղ ողջ մնացողներս միշտ ասենք. Փառք Քեզ, Աստված, Քո անունը օրհնյալ լինի հավիտյանս հավիտենից: Ամեն»:

Ուրեմն, Ս. Պատարագը, որ մեր Եկեղեցվո մեջ ամեն կիրակի կմատուցվի, Հիսուսի զոհաբերության խորհուրդն է, որով ամեն հավատացյալ պահ մը կվերանա ու հոգիով կվերապրի անոր տառապանքը և անոր անսահման սերը հանդեպ մարդոց, որոնց համար զոհվեցավ: Ասկե պետք չէ հետևցնենք, սակայն, թե քանի որ Հիսուս մեր մեղքերուն համար զոհվեցավ, այլևս, ուրեմն, մենք մեղք չունինք ու առանց խղճի խայթի կրնանք ապրիլ: Այսպիսի ըմբռնում մը, անշուշտ, շատ միամիտ պիտի ըլլար և բոլորովին կեղծ:

Հիսուս իր զոհաբերությամբ՝ մեղքը վերցնելու, չարը խափանելու գաղափարին գերագույն ապացույցը տվավ, մեծագույն տուրքը վճարեց, որպես աշխարհասասան օրինակ մարդկության համար:

Հիսուսի զոհաբերությունը ամեն քրիստոնյայի համար հոգեկան անխորտակելի ուժ մըն է՝ թե՛ չարը հաղթահարված է, թե՛ մեղքեն ազատվելու ճանապարհը բացված է: Այդ ճանապարհը Հիսուսի Ավետարանն է, անոր թողած կտակը, որուն եթե հավատանք ու հետևինք, կգիտնանք արբվիլ մեր մեղքերեն այն միջոցներով, որոնց մասին արդեն խոսեցանք:

Ահա՛, ուրեմն, Ս. Պատարգի հիմնական իմաստը և անոր խոշոր նշանակությունը քրիստոնյայի մը հոգևոր ապրումներուն մեջ»:

ՔԱՌԱՍՆՕՐՅԱ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

«Երանելիք են որք բնակեալ են ի տան Տեառն»:

Քառասուն օրեր առաջ ամբողջ հայ ժողովուրդը արցունքը աչքերին, բայց Տերունական հավատի խոստման կնիքը հոգում, դեպի հավիտենական հանգստի օթևանը ճանապարհեց իր սիրեցյալ Հովվապետին՝ Ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսին:

Հոկտեմբերի 2-ին, հավարտ սուրբ պատարագի, հանդիսադրությամբ Կաթողիկոսական Տեղապահ և Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի և աղոթական ներկայությամբ սրբազան հայրերի ու Մայր Աթոռիս միաբանության, տեղի ունեցավ Վեհափառ Հայրապետի մահվան քառասնօրյա կարգը, որի ընթացքին ամբողջ հավատացյալ ժողովուրդը և հոգևոր դասը մեր հայրերի սրբագործված աղոթքներով և մաղթանքներով խնդրեցին Տիրոջը՝ ասելով. «Դո՛ւ Տէր եւ այժմ ընկալ զխնդրուածս մեր եւ հանգո զհոգի սորա առ ամենայն արբոց եւ սիրելեաց անուան քոյ: Եւ զգերեզման ծառայիս քո կնքեալ պահեսցես, զի միշտ պահեսցին նշխարք ոսկերաց սորա մինչեւ յօր վերջնում կրկին գա-